Արձանագրություն N 2

ՀՀ Ազգային ժողովի կարիքների համար համակարգչային տեխնիկայի ձեռքբերման նպատակով կազմակերպված
ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-24/16 ծածկագրով գնման ընթացակարգի
/այսուհետ նաև՝ Ընթացակարգ/ գնահատող հանձնաժողովի նիստի

20.03.2024թ.
ժամը՝ 15:45

ք. Երևան, Բաղրամյան 19

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Վ.Հարությունյան
Հանձնաժողովի անդամներ՝ Վ.Թորոսյան, Լ.Լևոնյան, Ա.Մանուկյան, Ա.Լալայան*
Հանձնաժողովի քարտուղար՝ Հ.Սաղաթելյան
*Նիստից բացակայում է Անժելա Լալայանը

1. Տեղեկատվություն գնման հայտով սահմանված գնման գների վերաբերյալ

Չափաբաժնի համարը	***Չափաբաժնի անվանումը***	***Գնման հայտով սահմանված գնման գինը (ՀՀ դրամ)***
1	համակարգչային մոնիտոր	2100000
2	դյուրակիր համակարգիչներ	10675000
3	սկաներներ համակարգիչների համար	1590000

2. Տեղեկություն՝ էլեկտրոնային աճուրդի հայտերի բացման և աճուրդը սկսելու վերաբերյալ

Հայտերը բացվել են eauction.armeps.am համակարգի միջոցով /այսուհետ՝ Համակարգ/ 18.03.2024թ.-ին ժամը 15:45-ին:

Էլեկտրոնային աճուրդը սկսվել է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրը՝ 19.03.2024 թ.-ին ժամը 15:45-ին:

3. Հայտեր ներկայացրած մասնակիցների տվյալները՝ անվանումը, գործունեության հասցեն, կապի միջոցը, էլ.հասցեն

Հ/հ	Մասնակիցների անվանումները	Գործունեության հասցեն	Կապի միջոցներ	Էլ. հասցե
1	Անհատ Ձեռնարկատեր Արթուր Հարությունյան Սերյոժայի	Ք.Երևան,Շիրազի փ. շ.6/5	+37499505060	harart.tender@gmail.com
2	LA IMPORT LLC	Ք.Երևան,Երկաթուղայիններ 4փ 2/4	098815665	llaaimport@yandex.ru
3	«Պատրոն ՌՄ» ՍՊԸ	ք. Երևան, Վարդանանց 18/2	010 54-43-48, 095 51-99-17	corp@patron.am
4	<<ՍԵԳ>> ՍՊԸ	ՀՀ ք. Երևան Կուրղինյան նրբ. 6 շենք, բն.32	055-01-90-60, 077-66-07-86, 093-36-93-77	seg_tender@mail.ru

4. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ

ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-24/16 ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ «Գնումների մասին» օրենքով (այսուհետ՝ Օրենք) նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից գնահատող հանձնաժողովի քարտուղարին հիմնավորումներ չեն ներկայացվել:

5. Տեղեկատվություն հրավերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

Հրավերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

6.Տեղեկություն հակադարձ աճուրդի արդյունքների վերաբերյալ

ՉՀ	Զբաղեցրած տեղ	Ներկայացված հայտեր	Նախահաշվային գին	Նախնական առաջարկ			Վերջին առաջարկ			Մասնակցի կարգավիճակ
				Արժեք	ԱԱՀ	Գին	Արժեք	ԱԱՀ	Գին	
1	1	Անհատ Ձեռնարկատեր Արթուր Հարությունյան Սերյոժայի	2100000	1750000	20 %	2100000	1750000	20 %	2100000.00	
1	2	LA IMPORT LLC	2100000	120000000	20 %	144000000	120000000	20 %	144000000.00	Մերժված
2	1	Անհատ Ձեռնարկատեր Արթուր Հարությունյան Սերյոժայի	10675000	8895000	20 %	10674000	8895000	20 %	10674000.00	
2	2	LA IMPORT LLC	10675000	120000000	20 %	144000000	120000000	20 %	144000000.00	Մերժված
3	1	ՊԱՏՐՈՆ ՌՄ ՍՊԸ	1590000	1375000	20 %	1650000	1311750	20 %	1574100.00	
3	2	Անհատ Ձեռնարկատեր Արթուր Հարությունյան Սերյոժայի	1590000	1325000	20 %	1590000	1325000	20 %	1590000.00	
3	3	ՄԵԳ ՍՊԸ	1590000	1586400	0 %	1586400	1586400	0 %	1586400.00	
3	4	LA IMPORT LLC	1590000	120000000	20 %	144000000	120000000	20 %	144000000.00	Մերժված

Աճուրդն ամփոփվել է 19.03.2024 թվականին: Ընթացակարգի 1-ին, 2-րդ չափաբաժնով առաջին տեղ զբաղեցրած մասնակից Համակարգի կողմից համարվել է Արթուր Հարությունյան Սերյոժայի ԱՁ–ն, Ընթացակարգի 3-րդ չափաբաժնով առաջին տեղ զբաղեցրած մասնակից Համակարգի կողմից համարվել է ՊԱՏՐՈՆ ՌՄ ՍՊԸ-ն:

7. Տվյալներ՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված հայտերի՝ /հայտում առկա փաստաթղթեր, ինչպես նաև Համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիր/ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու և նիստը կասեցնելու մասին

Հանձնաժողովն ուսումնասիրելով eauction.armeps.am համակարգի կողմից առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներ՝ Արթուր Հարությունյան Սերյոժայի ԱՁ-ի և ՊԱՏՐՈՆ ՌՄ ՍՊԸ-ի կողմից ներկայացրած հայտերը /հայտում առկա փաստաթղթեր, ինչպես նաև Համակարգ մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիր/, արձանագրեց՝

- **ՊԱՏՐՈՆ ՌՄ ՍՊԸ-ի** հայտում առկա են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, մասնավորապես՝

eauction.armeps.am համակարգ մուտքագրված /լրացված/ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում՝ «Տեխնիկական բնութագիր» սյունակում 3-րդ չափաբաժնում ներկայացվելիք սերտիֆիկատը ենթակա է հստակեցման (անհրաժեշտ է նշել այն սերտիֆիկատը, որը ներկայացվելու է):

- **Անհատ Ձեռնարկատեր Արթուր Հարությունյան Սերյոժայի** հայտում առկա են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, մասնավորապես՝

Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունում՝ /Հավելված 1/ ծածկագիրը նշված է «ՀՀ ՔԿ ԷԱՃԱՊՁԲ-ՎՍ-24/1», մինչդեռ անհրաժեշտ է նշել «ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-24/16»: Առաջին նախադասությունում՝ «Անհատ Ձեռնարկատեր Արթուր Հարությունյան Սերյոժայի հայտնում է, որ ցանկություն ունի մասնակցել ՀՀ քննչական կոմիտեի կողմից «ՀՀ ՔԿ ԷԱՃԱՊՁԲ-ՎՍ-24/1» ծածկագրով հայտարարված

էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի (այսուհետ՝ ընթացակարգ) 1,3,4 չափաբաժնին (չափաբաժիններին) և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:» նախադասությունը անհրաժեշտ է խմբագրել, նշելով՝ «Անհատ Ձեռնարկատեր Արթուր Հարությունյան Սերյոժայի հայտնում է, որ ցանկություն ունի մասնակցել ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի կողմից «ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-24/16» ծածկագրով հայտարարված էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի (այսուհետ՝ ընթացակարգ) 1,2,3 չափաբաժնին (չափաբաժիններին) և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:», քանի որ Մասնակիցը հայտ է ներկայացրել 1-3 չափաբաժնով և Ընթացակարգը կազմակերպված է ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի կողմից: 1-ին կետում ներկայացվել է Հրավերի պահանջներին անհամապատասխան՝ թերի տեղեկատվություն, մասնավորապես՝ «1) բավարարում է ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և պարտավորվում է ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, ընթացակարգի հրավերով սահմանված կարգով և ժամկետում ներկայացնել որակավորման ապահովում» նախադասությունը անհրաժեշտ է խմբագրել նշելով՝ «1) «Արթուր Հարությունյան Սերյոժայի ԱՁ-ն և իրեն փոխկապակցված անձինք բավարարում են ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-24/16 ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և Արթուր Հարությունյան Սերյոժայի ԱՁ-ն պարտավորվում է ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, ընթացակարգի հրավերով սահմանված կարգով և ժամկետում ներկայացնել որակավորման ապահովում»: Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունը՝ /Հավելված 1/ հաստատված է 20.02.2024թ. էլեկտրոնային թվային ստորագրությամբ, սակայն ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի կողմից ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-24/16 ծածկագրով գնման ընթացակարգը հրապարակվել է 2024 թվականի մարտի 7-ին, անհրաժեշտ է շտկել (հաստատել) էլեկտրոնային ստորագրությունը:

eauction.armeps.am համակարգ մուտքագրված /լրացված/ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում՝ «Տեխնիկական բնութագիր» սյունակում 1-ին և 2-րդ չափաբաժնում ներկայացվելիք սերտիֆիկատը ենթակա է հստակեցման (անհրաժեշտ է նշել այն սերտիֆիկատը, որը ներկայացվելու է):

Հիմք ընդունելով վերոգրյալը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետով, Հանձնաժողովը որոշեց 20.03.2024թ. նիստը կասեցնել՝ Համակարգի միջոցով ծանուցել առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներ Արթուր Հարությունյան Սերյոժայի ԱՁ-ին և «Պատրոն ՌՄ» ՍՊԸ-ին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում Համակարգի միջոցով շտկել անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում կողմ՝ 4, դեմ՝ 0:

8. Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրի, օրվա և ժամի մասին

Հանձնաժողովը որոշեց հաջորդ նիստը նշանակել 22.03.2024թ. ժամը 15:45-ին, ք. Երևան, Մ. Բաղրամյան պողոտա 19 հասցեում:

Ընդունվել է որոշում կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Վարդան Հարությունյան

անդամներ՝ _____ Վարդան Թորոսյան

_____ Լևոն Լևոնյան

_____ Արմենակ Մանուկյան

քարտուղար՝ _____ Հերմինե Սաղաթելյան